Վայոց Ձորի մարզպետարան,
մարզպետ՝ Տրդատ Սարգսյանին
Հասցե՝ ք. Եղեգնաձոր, Շահումյան փողոց, 5 շենք

Փաստաբան Դավիթ Գյուրջյանից
Հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 5, 22ա սենյակ

14.01.2019թ.

Փաստաբանական հարցում

Հարգելի պարոն Սարգսյան,

Ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասով՝ վստահորդիս իրավաբանական օգնություն ցույց տալու նպատակով, խնդրում եմ տրամադրել հետևյալ տեղեկատվությունը.

1.1. մարզպետարանի աշխատակազմում որքա՞ն է կազմում ղեկավար պաշտոններ զբաղեցնող կանանց և տղամարդկանց թիվը (տոկոսային հարաբերակցությամբ և թվային ցուցանիշներով).
1.2. մարզպետարանի աշխատակազմում որքա՞ն է կազմում ղեկավար պաշտոններ զբաղեցնող 1-ին կարգի հաշմանդամների անձանց թիվը.
1.3. մարզպետարանի աշխատակազմում որքա՞ն է կազմում ղեկավար պաշտոններ զբաղեցնող ազգությամբ հայ, սակայն այլ երկրի քաղաքացի հանդիսացող անձանց թիվը.
1.4. մարզպետարանի աշխատակազմում որքա՞ն է կազմում ղեկավար պաշտոններ զբաղեցնող ՀՀ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների թիվը:

Սույն հարցման մեջ **ղեկավար պաշտոնների** տակ խնդրում եմ հասկանալ մարզպետի տեղակալների, մարզպետարանի և մարզպետարանին ենթակա վարչությունների, բաժինների, տեսչությունների, ծառայությունների, գործակալությունների, ՊՈԱԿ-ների և ԾԻԳ-երի ղեկավարների պաշտոնները:

Կից ներկայացվում են.

1. Դավիթ Գյուրջյանի փաստաբանական գործունեության արտոնագրի պատճենը:

Փաստաբան՝

Դավիթ Գյուրջյան

Հ. Հ. ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
Մուտքի թիվ 0206
21, 01 2019թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

*Փաստաբանական գործունեության*
*Արտոնագիր № 1897*

**ԴԱՎԻԹ ԳՅՈՒՐՋՅԱՆ**

*Лицензия № 1897*
*на право адвокатской деятельности*

**ДАВИД ГЮРДЖЯН**

*License № 1897*
*of advocate's activity*

**DAVIT GYURJYAN**

| | |
|---|---|
| Նախագահ | Արա Զոհրաբյան |
| Председатель | Ара Зограбян |
| Chairman | Ara Zohrabyan |